ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/22

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ՄԵԳԻԵԼ» ՍՊԸ-ի կողմից 15.02.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ՄԵԳԻԵԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՄԵԳԻԵԼ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 30.11.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«1.Վեճի առարկան.

1.1 «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/5 ծածկագրով գնման ընթացակարգ:

1.2 ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/5 ծածկագրով հրավերը հրապարակվել է 08.02.2019թ:

1.3 Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը՝ 15.02.2019թ, ժամը՝ 14:00:

1.4 Հակադարձ աճուրդ՝ 18.02.2019թ:

1.5 ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/5 ծածկագրով գնմանը մասնակցելու նպատակով «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ Ընկերություն) ուսումնասիրելով հրավերը՝ տեխնիկական բնութագրում արձանագրել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների հետ և պարզաբանման նպատակով հարցադրում է ներկայացվել հրավերի տեխնիկական բնութագրի 42-ից 47-րդ չափաբաժինների վերաբերյալ:

1.6 Հարցադրումների վերաբերյալ տրվել են պատասխաններ, որոնք այնուամենայնիվ ըստ էության չեն պարզաբանում տեխնիկական բնութագրերում առկա անհստակությունը և չեն ապահովում ներկայացվող պահանջների հստակ բնութագիր, որոնք տարընկալման հիմքեր չներառեն:

2.Բողոքի փաստական և իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի «գնումների եւ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացումը»:

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:

Համաձայն օրենքի 13-րդ հոդվածի «1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան»:

Նկատի ունենալով, որ հրավերի տեխնիկական բնութագրերում անհրաժեշտ բժշկական պարագաների նկարագրի ձևակերպումը հստակ ներկայացված չէ, ընկերությունը հանդես է եկել հարցադրմամբ: Ներկայացված պարզաբանումների ուսումնասիրությունից չենք կարող արձանագրել, որ պատվիրատուն տվել է ճշգրիտ, հստակ նկարագիր՝ պահանջվող պարագայի վերաբերյալ:

Հարցադրում. «Տալ պարզաբանում 42-47 չափաբաժինների մասով, քանի որ Ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում նշված է ընդհանուր նկարագիր եւ օգտագործելով «ըստ պատվիրատուի պահանջի» եզրույթը խտրականություն է դնում մյուս մասնակիցների նկատմամբ, մեկ կամ մի քանի կարելանյութերի չափերի մասնակցությանը մինչդեռ կան արտադրողներ որոնք չունեն Ձեր կողմից պահանջվող վիրաբուժական կարելանյութերի 1 չափաբաժնով նշված ամբողջական տեսականին: Ուստի խնդրում ենք Ձեզ առանձնացնել բոլոր չափաբաժինները»:

Պարզաբանում. «42-րդ և 43-րդ չափաբաժինները նշված են համապատասխանաբար 3/0 եւ 4/0, թելի երկարության չափը ցանկալի է գրված երկարություններից, բայց պարտադիր չէ: 44-47 չափաբաժինները նշված են միասին, քանի որ բոլոր նշված համարների առկայությունը ցանկալի է, բայց պարտադիր չէ»:

Ինչպես հրավերում, այնպես էլ՝ ներկայացված պարզաբանումներով պատվիրատուն չի ղեկավարվել վերոհիշյալ օրենքի նորմերով եւ մասնակիցներին ճշգրիտ ընկալելու հնարավորությունից զրկում է նրանում արտահայտված այն ձևակերպումներով, որ «ցանկալի

է, բայց պարտադիր չէ»: Ըստ էության պատվիրատուի կողմից չի տրվել հստակ, ճշգրիտ պարզաբանում նկարագրերի վերաբերյալ:

Օրինակ՝ 44-ից 47-րդ չափաբաժիններում թելերի հաստությունը, երկարությունը ասեղի ձևը նշված է մի քանի տարբեր չափերի, որը սահմանափակում է մեկ կամ մի քանի չափորոշիչներով տվյալ չափաբաժնի մասնակցությանը դրանցից յուրաքանչյուրն ունի տարբեր գնային կարգավորում: Ներկայացված հրավերի բնութագրով ճշգրիտ ընկալել գնային կարգավորումը հնարավոր չէ:

Սա վկայում է այն մասին, որ պատվիրատուի ներկայացրած տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում օրենքով սահմանված նորմերին եւ հայտատուի համար ստեղծում են ապակողմնորոշող իրավիճակ:

Պատվիրատուի պարզաբնումներից կարող ենք ընկալել, որ տեխնիկական բնութագրերը ներկայացվել են հայեցողական մոտեցմամբ:

Վիճարկվող հրավերով մասնակցությունը ըստ էության առաջացնում է մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման 22-րդ կետը սահմանում է, որ «Գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ»:

Պատվիրատուն օրենքին անհամապատասխան հրավեր ներկայացնելով սահմանափակում է հնարավոր հայտատու մասնակիցներին մասնակցելու հայտարարված գնման ընթացակարգին:

Իրավական նորմերի խախտմամբ կազմված և ներկայացված հրավերը չի կարող ապահովել գնումների այն ընթացակարգը, որը նախատեսել է օրենսդիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքով եւ դրանց իրականացվան համար ընդունված իրավական ակտերով (ՀՀ կառավարության որոշումներ):

3. Պահանջ.

3.1. Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը պարտավորեցնել չկայացած համարելու ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/5 ծածկագրով գնման ընթացակարգը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչ Անետա Սարգսյանը:

2. <u>«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Լուսինե Արսենյանը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 15.02.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցչի բանավոր դիրքորոշումը.

Գյումրու բժշկական կենտրոնի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ):

Ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանվել են հետևյալ հատկանիշները.

- 42-րդ չափաբաժնով՝ «Վիրաբուժական թելեր-Plain Catgut 3/0» ապրանքատեսակի մասով. «Կարելանյութ Կետգուտ 3/0: Թելի երկարություն ոչ պակաս քան՝ 70սմ, 75սմ, 90սմ չափսերի: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Ասեղի տեսակը՝ ծակող, 1/2, 25 մմ կամ այլ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ISO13485 կամ Г О С Т Р И С О 13485 կամ համարժեք»:

- 43-րդ չափաբաժնով՝ «Վիրաբուժական թելեր-Plain Catgut 4/0» ապրանքատեսակի մասով. «Կարելանյութ Կետգուտ 4/0 : Թելի երկարություն ոչ պակաս քան՝ 70սմ, 75սմ, 90սմ չափսերի: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Ասեղի տեսակը՝ ծակող , 1/2, 25 մմ կամ այլ : Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք»:

- 44-րդ չափաբաժնով՝ «Վիրաբուժական թելեր-Նեյլոն» ապրանքատեսակի մասով. «Կարելանյութ Պոլիգլակտին 0, 1, 2/0, 3/0, 4/0,5/0: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Թելի երկարություն ոչ պակաս քան 70սմ, 75սմ, 90սմ չափսերի: Ասեղի տեսակը՝կտրող, 1/4, 1/2 և այլ ձևերի: Ձևը ըստ պատվիրատուի պահանջի: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք»:

- 45-րդ չափաբաժնով՝ «Վիրաբուժական թելեր- Պոլիգլակտին» ապրանքատեսակի մասով. «Կարելանյութ Պոլիպրոպիլեն 0, 1, 2/0, 3/0, 4/0,5/0: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Կտրող և ծակող տեսակի: Թելի երկարություն ոչ պակաս քան 70սմ, 75սմ, 90սմ չափսերի: Ասեղի տեսակը՝ 1/4, 1/2 և այլ ձևերի: Ձևը ըստ պատվիրատուի պահանջի: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք»:

- 46-րդ չափաբաժնով՝ «Վիրաբուժական թելեր-Պոլիպրոպիլեն» ապրանքատեսակի մասով. «Կարելանյութ Պոլիպրոպիլեն 0, 1, 2/0, 3/0, 4/0,5/0: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Կտրող և ծակող տեսակի: Թելի երկարություն ոչ պակաս քան 70սմ, 75սմ, 90սմ չափսերի: Ասեղի տեսակը՝ 1/4, 1/2 և այլ ձևերի: Ձևը ըստ պատվիրատուի պահանջի: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2 տարի

պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք»:

- 47-րդ չափաբաժնով՝ «Վիրաբուժական թելեր-Սիլկ» ապրանքատեսակի մասով. «Կարելանյութ Սիլկ 0, 1, 2/0, 3/0, 4/0: Չափսերը ըստ պատվիրատուի պահանջի: Կտրող և ծակող տեսակի: Թելի երկարություն ոչ պակաս քան 70սմ, 75սմ, 90սմ չափսերի: Ասեղի տեսակը՝ 1/4, 1/2 և այլ ձևերի: Ձևը ըստ պատվիրատուի պահանջի: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք»:

«Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է, որ Աճուրդի 42-ից 47-րդ չափաբաժինների մասով Պատվիրատուի կողմից սահմանվել են ձեռքբերվող ապրանքի այնպիսի տվյալներ և պայմաններ, որոնք ընդհանրական են, հստակ և սպառիչ չեն նկարագրում պահանջվող ապրանքի հատկանիշները, գնման առարկայի բնութագրի տարաբնույթ մեկնաբանման տեղիք են տալիս, ուստի դրանց սահմանումը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից, ինչի արդյունքում հնարավոր մասնակիցները, այդ թվում նաև Ընկերությունը, փաստացիորեն կարող են զրկվել Ընթացակարգին մասնակցելու հնարավորությունից: Նկատի ունենալով վերը նշված հանգամանքը, Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է հարցում, որով ակնկալել է ստանալ պատճառաբանված պարզաբանում նշված անհստակությունների վերաբերյալ, ինչը սակայն տեղի չի ունեցել: Մասնավորապես, ներկայացված հարցմամբ Ընկերությունը Պատվիրատուի ուշադրությունը հրավիրել էր այն հանգամանքի վրա, որ 42-ից 47-րդ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերում նշված է ապրանքի ընդհանուր նկարագիրը, ընդ որում, նշված են նույն ապրանքատեսակի տարբեր պարամետրեր ունեցող տեսակները, (օրինակ, թելի երկարությունը՝ ոչ պակաս քան 70սմ, 75սմ, 90սմ չափսերի, ասեղի տեսակը՝ 1/4, 1/2 և այլ ձևերի և այլն): Վերոգրյալն ըստ բողոքաբերի անընդունելի է, քանի որ առկա ձևակերպումները, ինչպես նաև օգտագործված «ըստ պատվիրատուի պահանջի» եզրույթը անհավասար պայմաններ է ստեղծում այն մասնակիցների նկատմամբ, որոնք չունեն Պատվիրատուի կողմից պահաջվող

վիրաբուժական կարանյութերի մեկ չափաբաժնով նշված ողջ տեսականին, և կարող են մատակարարել դրանցից միայն մեկը կամ մի քանիսը:

Բացի այդ, 44-ից 47-րդ չափաբաժիններով նախատեսված թելերի հաստությունը, երկարությունը, ասեղի ձևը (տեսակը) նշված է մի քանի տարբեր չափերի, ինչից ուղղակիորեն հետևում է, որ դրանցից յուրաքանչյուրն ունի տարբեր գնային դասակարգում, ինչը ևս հնարավոր մասնակցի համար ստեղծում է ապակողմնորոշող իրավիճակ՝ առաջարկվող ապրանքի համար գնային առաջարկ սահմանելու գործընթացում: Սակայն, Պատվիրատուի կողմից տրված՝ «44-ից 47-րդ չափաբաժինները նշված են միասին, քանի որ բոլոր նշված համարների առկայությունը ցանկալի է, բայց պարտադիր չէ» պարզաբանումը ևս հնարավորություն չի տալիս ճշգրիտ ընկալելու գնման առարկան, ինչն ըստ էության առաջացնում է մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ բողոքաբերը պնդեց Բողոքի քննության շրջանակներում հայտնած գրավոր դիրքորոշումն ամբողջությամբ:

Պաատվիրատուի ներկայացուցիչն՝ անդրադառնալով Բողոքով վիճարկվող չափաբաժինների բնութագրերին, ընդունեց, որ գնման առարկայի 42-ից 47-րդ չափաբաժնով սահմանված «կարելանյութեր» ապրանքատեսակները ներառում են տարբեր պարամետրեր ունեցող առանձին ապրանքատեսակներ, սակայն նշեց, որ հնարավոր մատակարարի մոտ բոլոր նշված ապրանքատեսակների առկայությունը ցանկալի է, բայց պարտադիր պայման չէ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը (...).

Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Հրավերով պահանջվող՝ Աճուրդի 42-ից 47-րդ չափաբաժիններից յուրաքանչյուրի մասով Պատվիրատուի կողմից խմբավորվել են նույն ապրանքատեսակի՝ կարելանյութի, տարբեր չափանիշներ ունեցող տեսակները, (օրինակ, թելի երկարությունը՝ ոչ պակաս քան 70սմ, 75սմ, 90սմ, ասեղի չափսերը՝ 1/4, 1/2, և այլ ձևերի և այլն):

- նշված չափաբաժինների բնութագրերում Պատվիրատուի կողմից սահմանվել է «ըստ պատվիրատուի պահանջի» ձևակերպումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընկերությունը Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պայմանների վերաբերյալ Պատվիրատուին ներկայացված հարցման շրջանակներում վերջինիս խնդրել էր գնման առարկայի տարբեր չափանիշներ ունեցող տեսակներն առանձնացնել ըստ չափաբաժինների, ինչը սակայն Պատվիրատուի կողմից չի կատարվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով նախատեսված գնման առարկայի

42-ից 47-րդ չափաբաժինների բնութագրերը չեն բխում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 25-րդ հոդվածի 2-րդ մասով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՄԵԳԻԵԼ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 15.02.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ և 47-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ